## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի h.130 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, **հոգեբանի (1 դրույք), լոգոպեդի (1 դրույք), հատուկ մանկավարժի (1 դրույք)** թափուր տեղերի համար:*

*Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:*

*Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝*

*-դիմում (Ձև1),մեկ լուսանկար 3x4 չափի,*

*-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*-անձը հաստատող փաստաթուղթ,*

*-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձև4),*

*-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,*

*-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*

*-հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*-որակավորման փարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:*

*Փաստաթղթերն ընդունվում են **ս/թ. ապրիլի 8-ից մինչև մայիսի 7-ը ներառյալ**, ամեն օր՝ **ժամը 10:00-17:00**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:*

*Մրցույթը տեղի կունենա **ս.թ. մայիսի 13-ին՝ ժամը 14:00-ին,** «Երևանի h.130 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Երևան, Ներքին Չարբախի 3-րդ փողոց 58/5:*

*Տեղեկությունների համար զանգահարել 010-42-66-49 հեռախոսահամարով:*